№ 39 Շաբաթ Ապրիլի 5 — 1886 — Շաբաթ Ապրիլի 5 № 39

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն-օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ 1886 ԹՒԻՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, շաբաթը երեք անգամ, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, 11 կամ 10 ամսվանը 9 ռուբլ, վեց ամսվանը 6 ռուբլ։

Գրվել «ՄՇԱԿԻՆՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պավիլիօնում։ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտնվում է Բարօնակի և Բաղարնի փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը, № 12 բնակարանում։ Ուղղակի մուտքը Բաղարնի փողոցից է, Բէմէսլէնոյա Ուպրավայի դիմաց։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ «Մշակին» գրվելով կարելի է վճարել 25 ֆրանկանոց թղթադրամով։

Թիֆլիսում «ՄՇԱԿԻ» համարները հատով ծախվում են 7 կոպէկով պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պավիլիօնում, պ. ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ծխախոտի մագազինում (Կովկաս հիւրանոցի տակ) և պ. ԱԼԻԽԱՆՈՎԻ ծխախոտի մագազինում (Վ. օրօնցովի արձանի դիմաց)։

Յայտարարութիւնները, ամեն լեզուներով, ընդունվում են ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ մօտ։ Յայտարարութիւնների իւրաքանչիւր բառին վճարվում է 2 կոպէկ։

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, բաց է ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, բացի կիրակի օրերից։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Հասցէն փոխելու ժամանակ պէտք է ուղարկել խմբագրութեանը 28 կոպէկ կամ 4 հատ 7 կոպէկանոց փոստային մարկա։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի կարևոր բացատրութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Արդինայից։ Նամակ Շուշուց։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Ցունաստան։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՏԵՂԵԿԱՑՈՅՑ։

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

—

Շատերը մեր աշխատակիցներից ուղարկում են մեզ թարգմանական, մեծ մասամբ ընդարձակ յօդուածներ, բանասիրականներ, վէպեր և այլն։ Շատերը նամակներ են գրում մեզ թէ պատրաստ ունեն թարգմանութիւններ և հարցնում են մեզ արդեօք կը զետեղենք „Մշակի“ էջերում այդ թարգմանութիւնները, եթէ նրանք մեզ ուղարկվեն։

Որովհետև խմբագրութեանը անհնարին է ամենքին նամակներով պատասխանել, ուստի մենք ստիպված ենք այստեղ մի քանի խօսքով բացատրել մեր կարծիքը թարգմանական յօդուածների պարբերական թերթի մէջ զետեղելու մասին։

Մենք սկզբունքով ընդդէմ չենք ընտիր թարգմանական գրուածների քաղաքական-գրական թերթի մէջ զետեղելուն։ Բայց գոնէ այս տարի մենք շատ դժուարանում ենք տպագրել „Մշակի“ էջերի մէջ որ և է, մանաւանդ երկար թարգմանական յօդուածներ օտար գրականութիւններից վերցրած և ահա ինչ պատճառներով։

1. Մեր լրագիրը այս տարի շաբաթը միայն երեք անգամ է հրատարակվում, և ոչ թէ ամեն օր, ուրեմն մեզ շատ դժուար է, խմբագրական պօրտֆէօլի մէջ ինքնուրոյն առատ նիւթ ունենալով, տեղ տալ թարգմանութիւններին ի վնաս ինքնուրոյն յօդուածների։

2. Տարի ու կէսից աւելի „Մշակի“ հրատարակութիւնը ընդմիջված լինելով, մեր հասարակական կեանքի մէջ դիպվեցան այնքան բազմաթիւ կարևոր և կենդանի խնդիրներ, որոնցից իւրաքանչիւրը իր հերթին է սպասում արծարծված լինելու համար,—որ մեզ ներկայ տարվայ ընթացքում հազիւ թէ հնարաւոր կը լինի տեղ տալ մեր լրագրի էջերի մէջ եւրոպական թէկուզ ամենայայտնի հեղինակութիւնների թարգմանութիւններին, քանի որ մեր ընթացիկ առօրեայ ամենակարևոր խնդիրներից շատերը անուշադիր թողվեցան, գրական ասպարիզից „Մշակի“ երկար բացակայութեան ժամանակ։

3. Մեր խորին համոզմունքն է, ի հարկէ, որ հայոց ժամանակակից գրականութիւնը, արտայայտութիւն լինելով, ինչպէս և ամեն գրականութիւն, ազգի մտաւոր կեանքի, իր զարգացմամբ, իր գեղարուեստական մշակութեան ձևով, իր մտքերի խորութեամբ շատ և շատ յետ է մնացել եւրոպական որ և է ազգի գրականութիւնից,—սակայն մենք միշտ այն կարծիքի էինք, որ ամենահում ձևով, ամենաանտաշ կերպով արտայայտած գրական ինքնուրոյն կարծիքը միշտ աւելի արժէք ունի և աւելի էլ օգուտ կարող է տալ մի ազգի ընթերցող դասին, քան թէ օտար ազգի ամենաքանչելի, կատարեալ, իմաստալի մտաւոր արդիւնքի թարգմանութիւնը։ Այս ինչքան էլ բարձր լինէր, այնու ամենայնիւ միշտ կը լինի մեզ համար օտար և մեր հասարակութեան մեծամասնութեան համար անմատչելի։

Մենք ունենք այս րօպէիս մեր խմբագրական պօրտֆէօլի մէջ Գարշինի, Դիկէնսի, Շելգունովի, Տուրգենեվի և ուրիշ հեղինակների գրուածների հայերէն թարգմանութիւնները,—բայց նրանք օտար, իրանց զարգացմամբ աւելի բարձր կուլտուրական շրջանների մտաւոր արդիւքներ լինելով, այնքան մեզ համար հասկանալի չեն, որքան մեր ինքնուրոյն, թէև գուցէ անտաշ գրուածները թէ ձևի և թէ մտքի կողմից, որոնք, սակայն, ունեն այն առաւելութիւնը որ ներկայացնում են մեր սեփական կեանքի պահանջների արտայայտութիւնը, մեր սեփական, ինքնուրոյն մտածողութեան արգասիքը։

„Մշակի“ նպատակը միշտ եղել է, իր հնարաւորի չափ, ծնեցնել ժողովրդի մէջ ինքնուրոյն մտածողութիւն, վարժեցնել հային որ նա ինքն մտածի իր սեփական կարիքների, իր հասարակութեան առօրեայ կենսական պահանջների մասին, որ հայը ընտելանայ վերջապէս դիտող լինել, հետազօտել իրան շրջապատող կեանքի երևոյթները և իր այդ ինքնագոյ հետազօտութիւնների արդիւնքը ներկայացնի գրականութեանը, փոյթ չէ թէ ինչ գրական ձև կը տայ նա իր ստեղծագործութիւններին,—լրագրական թէ ամանդրական յօդուածի ձևը, քննադատութեան թէ պատկերի ու վէպի ձևը։

Հարկաւոր է, անհրաժեշտ է իսկ, ծանօթանալ օտար գրականութիւնների մտաւոր ամենաընտիր արտադրութիւնների հետ, բայց մի ազգին անդադար ներկայացնելով օտար, աւելի կատարեալ, մտաւոր զարգացման անհամեմատ աւելի բարձր աստիճանի վրա կանգնած ստեղծագործութիւնների թարգմանութիւնները, դժուար թէ դրանով կարելի լինէր նոյն ազգի մէջ գրել ցանկացողներին և մտածել ընդունակներին վարժեցնել շրջապատող կեանքի հետազօտութեան և ինքնուրոյն մտածողութեան։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐԴԻՆԱՅԻՑ

—

Մարտի 25-ին

Ներկայ ամսոյս 23-ին Շիրակի բոլոր դաշտերը ծածկվեցան ձիւնի ամենաթանձր սաւանով. ամբողջ ձմեռը այդքան ձիւն չէր տեղացել, որքան այժմս։ Շատերին, մանաւանդ ծեր մարդկանց, զարմանք է պատճառում այդ տեսակ եղանակը, որի նման երբէք տեսած չէին։ Գետերի ջրերը նորից սառեցին, ձիւնը տակաւին վերացած չէ, և հազիւ թէ մի չաբաթից վերանայ։ Անտանելի ցրտերը ևս յաջորդեցին ձիւնին. այնպիսի սառնամանիք է լինում, որ ձմեռվայ սկզբից մինչև այժմս տեսած չէինք։ Երկրագործները արդէն բաւական վարուցանք արել էին, բայց այժմս ձեռքերը ծոցերը դրած տանը անգործ մնացել են, և շատերը կասկածում են թէ ցուրտը գուցէ ցանած արտերը ոչնչացնէ։ Գիւղացիք իրանց բնակարաններում նորից սարքեցին վառարանները, այն ինչ մարտ ամսի սկզբներից բոլորովին վերցրել էին։

Շիրակում ամենայն տեղ, հողային վէճերը վերջ չունեն. միշտ կռիւ, ծեծ, վիրաւորանք, դատ անպակաս են։ Ապօրինի հողաբաժանութիւնը առհասարակ գիւղական հարուստ դասի յատկութիւնն է համարվում աւելի. չքաւոր դասակարգի մարդիկ միշտ մնում են սարուկ հարուստ դրացու մօտ։ Շատ անգամ ագէտ գիւղացին ինքն է պատճառ դառնում զրկվելու միջոցներից և իրաւունքներից, ըստ որում նա դիմում է շատ անգամ այնպիսի ագէտ և գործին անտեղեակ փաստաբաններին, որոնք փոխանակ գործը սանելու, գիւղացուն անդունդ են գլորում։ Ագէտ գիւղացուց փաստաբան ձևացող պարոնը իր փողը գլխից ստանում է, նրան փոյթ չէ թէ իր վարած դատը աջողվելու է թէ ձնասելու, և շատ անգամ էլ այդպիսի գործ վերցրած ժամանակ ուղղակի պարտամուրհակ է ստանում կլիէնտից այն պայմանով, որ եթէ գործը նրա օգտին տարաւ, դարձեալ ստանայ խոստացած գումարը, իսկ եթէ ոչ, գոնէ պարտամուրհակն ունի ձեռքում։ Մուրհակը գրվում է սովորաբար պարզ կերպով՝ «թէ վեր առինք և պարտ եմք տալու», առանց մէջը յիշելու գործի եղելութիւնը։ Անցնում է մի քանի ամիս. փաստաբանը, եթէ չը ստացաւ գումարը, դանգատվում է հաշտարար դատարանին և մէկ էլ տեսար մի օր խեղճ գիւղացուց պահանջում է փողերը։

Շ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Մարտի 27-ին

Բնական սակաւդէպ երևոյթները վերջերումս այստեղ սովորականի պէս են դառել չուշեցիներին զարմացնելու համար։ Դեռ անցեալներում երկրաշարժի մի քանի անդամ պատահած բաւական զգալի զարկերը վախեցրել էին ամենքին, թէ մի գուցէ Շամախու չար բախտը յանկարծ վիճակուի ժայռերի դագաթի վրա բազմած Շուշիին։ Մարտի սկզբից դեռ ևս Շուշին մի չոր եղանակ, մի պարզ օր չէր տեսել. իսկ ամսոյս 25-ի գիշերը $1^1/_4$ արշին խորութեամբ ձիւնը ծածկեց ամեն տեղ։ Նրա ծանրութեան տակ փլվեցան մի քանի կտուրներ, խանութներ, պատշգամբներ. ասում են թէ մահուան դէպքեր էլ եղած են։ Այս դեռ քաղաքում։ Իսկ գիւղերում, մանաւանդ լեռնային տեղերում, ձիւնը անհամեմատ չատ խոր է եղել։ Անցուդարձը քաղաքում դժուարացել էր, զօռով ճանապարհներ էին բանում. իսկ 12 ձիաներով լծած սայլակը չը կարողացաւ փոստը հասցնել մինչև նամակատունը. հարկ եղաւ մշակներով փոխադրել փոստային քսակները։ Այժմ փողոցներում լճացած ջրերը աւելի ևս դժուարացրել են երթևեկութիւնը։ Երևակայեցէք մի խեղճ մահկանացուի դրութիւնը, որ հարկադրուած է գնալ գիշերով Շուշիի նեղ ու ծուռ փողոցներով, քաղաքային լապտերների յուսահատ օրհասական լուսաւորութեան արդելքը յաղթելով։ Ասում են թէ, այդ անգին ձիւնը բաւական պիտի վնասէ անատնատան գիւղացիներին, որոնք այժմ բաւական չոր ապուր չունեն։

Տեղոյս հոգևոր դպրանոցի հոգաբարձութիւնը այս օրերը հրատարակեց իր հաշուետուցակը։ Ամենից շատ ուշադրութիւն են գրաւում կալուածները։ Դրանց որպիսութիւնների և տարածութիւնների մասին մեր խօսելը ի զուր է. ով կամենում է հարևանցի հասկացողութիւն կազմել այդ վանքական կալուածների մասին, որոնց արդիւնքները յատկացրած են դպրանոցին, թող կարդայ «Խամսայի մէլիքութիւնների 41-րդ գլուխը։ Հաշուից երևում է որ այդ կալուածները հասցրել են հոգաբարձութեանը արդիւնք 1,969 ռուբլ 7 կոպ.։ Բայց սա բոլորը չէ։ Նոյն տարուայ ընթացքում այդ իսկ կալուածները կառավարելու, պաշտպանելու համար ծախք եղած է 1,937 ռուբլ 88 կոպ.։ Ուրեմն հոգաբարձութիւնը ունեցել է զուտ արդիւնք 31 ռուբ. 19 կոպ.։ Հետաքրքիր փաստ, որով մի անգամ էլ հաստատվում է թէ աշխարհումս փող աշխատելը դժուար է, շատ դժուար։

Գաւառացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս 2 ապրիլի

Խնդրում եմ քանի մի էջեր չնորհէք ձեր պատուական թերթի մէջ այս իմ ակամայ պարզաբանութեանս, որով պարտքս եմ համարում մաքրել հասարակական գործքերը և յիշողութիւնները այն ամբաստանութիւններից զորս «Արձագանք» շաբաթաթերթը մինչև այսօր անպատիժ մնացած իր խմբագրի, պ. Աբգար Յովհաննիսեանի անձնաւորութեան վերաբերմամբ, շարունակում է բարդել ու դիպել նրանց վրա։

Անսահման ցաւում եմ, որ յիշեալ պարոնը այդպիսի մի անգոհունակ և ապարդիւն աշխատանք ինձ

վրա է դնում, գիտենալով որ ես երբէք չեմ պատրաստել կարեցաս չափ ծառայութիւն մատուցանել մեր հասարակութեանը: Այդպիսի դիպուածներում, ինչպէս ընթերցողը յիշում է, ինձ օգնում է կոյր բաղդը իր կոյր միջոցներով:

Անուրանալի փաստ է, որ պարոնի ծաղրածութեան և մասխարութեան դէմ իմ վերաբերմամբ ես միշտ բռնել եմ և կը պահպանեմ պահպանողական դիրք, որովհետև միայն այդ կերպիւ և միջոցով կարելի է պատժել նրանց, որոնց այնուհետև ես բացարձակապէս յայտնում եմ. «պարոն, ես անպարտ, դուք պարտական»:

Ահաւասիկ և իրողութիւնը. օրերումս կատարվեցան Ներսիսեան դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնները: «Մշակը» նկարագրեց ընտրողների պատկերը, որոյ մասին ինքն է պատասխանատու. նկարագրութեան մէջ մտաւ և պ. Աբգար Յովհաննիսեանի հասարակական պատկերը: Այդ վերջինը պատասխանեց «Մշակին» և պատասխանի մէջ կծեց և ինձ, իբրև հասարակական գործողի, ակնարկելով և պաշտօնս, և ասելով թէ ես հակակղերական եմ, կորցնելով իմ փաստաբանական հմտութեան յանձնած եկեղեցական կալուածների դատերը և նպաստեցի հայոց եկեղեցւոյ նիւթական աւերման (!?), ինչպէս պ. Գրիգոր Արծրունի նպաստում է հայոց եկեղեցւոյ մտաւոր և բարոյական անկման: Թող ժողովվեն բովանդակ աշխարհի իմաստունները և թող ասեն թէ «Մշակի» յիշեալ ֆելիէտօնի պատկերագրութիւնը կարող է արդեօք առնթ, պատճառ և կամ մի կապ համարվել, որպէս զի ազնուորէն լինի շօշափել իմ պաշտօնս:

Բայց և այնպէս, օգուտ կուզեմ քաղել այս հանգամանքից, որպէս զի դարձնեմ ում հարկն է ուշադրութիւն իմ յարաբերութեանցս վրա դէպի եկեղեցական դատաստանական գործերը, որոց վերջաւորութիւնը, իմ կարծիքով, անպայման ազդեցութիւն ունէ եկեղեցւոյ նիւթական գոյութեան վրա:

Մերձաւորապէս ահա տասն և հինգ տարի է, որ կաթողիկոսք, եպիսկոպոսք, վանահարք և քահանայք յանձնել են ինձ հայ եկեղեցեաց դատաստանական գործերը: Նրանց քանակութիւնը, դժբաղդաբար այստեղ թվել չեմ կարող, գործերը ըստ պատկանելոյն վերադարձման պատճառաւ: Գիտեմ միայն, որ կային գործեր, Քևվզարդայ, Էջմիածնի, Հաղբատի, Տաթևայ, Զարէք-Անապատի, Աղարձնոյ, Օձնա վանքի, Երևանի և Վրաստանի ու Իմէրեթի թեմերի: Հաստատապէս և ամենայն վստահութեամբ պնդում եմ ես, որ այդքան բազմաթիւ դատաստանական գործերից յընթացս տասն և հինգ ամաց եկեղեցին տարվել է միայն մի գործ, այն է Դիզակ գիւղի եկեղեցւոյ գործը գերեզմանատեղի մասին, այն ևս այն պատճառաւ, որ եկեղեցւոյ կողմանէ անուանեալ վկայք ուրացան եկեղեցւոյ իրաւունքը նոյն տեղի վրա և ուրեմն եկեղեցւոյ ներկայացուցչէ սխալվեցան իրանց սպասելեաց մէջ, յենվելով այդ վկաների վրա: Այդ գործի արժէքը գնահատված էր 500 ր. միայն, և որոշվեցաւ, որ վիճելի գետինը երբէք եկեղեցուն չէ պատկանել և թէ այդ տեղ միայն կար բարեկարգի յիշողութեանց շինութիւն:

Թողնելով կօնսիստորիաներին, սինոդին և վանահարց հաշվել ինձ յանձնված գործերի արժէքը, ես այսքան կասեմ, որ եթէ յիշեալ գործերի մէջ յիշեալ կալուածների, անտառների և այլն, տարածութիւնը, որ տիրում է Հայոց եկեղեցին, միացնէք, դուք կը ստանաք մի գուբերնիա, ինչպէս ինձ ասաց մի դատաւոր Զարէքայ Անապատի մասին թէ «помилуйте вы оспариваете цѣлую губернію»! Ուշադրութեան արժանի են քանի մի գործեր, ինչպէս Ախալցխայի եկեղեցեաց կալուածական գործերը, որք քննվում էին նահանգական չինական հաստատութեան մէջ, հաշտարար միջնորդների մօտ և այլն, որոնց թէ գրաւոր և թէ բանացի ձեռնարկութիւնը լնձ է եղել յանձնված, ձրիաբար, յայտնի բան է, և որք յաջողութեամբ աւարտած են ի՛ նպաստ եկեղեցւոյ: Գալով եկեղեցւոյ դրամական պահանջայ, նոյնպէս կասեմ, որ նրանք ևս դատարանների կողմանէ իրաւացի են ճանաչված, ինչպէս անիրաւացի են ճանաչված ուրիշների պահանջք եկեղեցիներից:

Բոլոր ասածներիս վկայ և ականատես էին հանդուցեալք՝ կաթողիկոս Գէորգ IV և Արքեպիսկոպոս Գաբրիէլ Այվազեան և ներկայումս բազդաւոր կը համարեմ ինձ վկայութեամբ Նորին Վեհափառութեան Մակար Կաթողիկոսի ամենայն հայոց, և մասնաւորապէս կանեմ Սինոդի անդամ ծայրագոյն վարդապետ Մամբրէի վրա: Իսկ անհաւատներին թողնում եմ քրքրել ինձ յանձնած գործերը զանազան արխիվներում, որք բերանացի ծանօթ են Թիֆլիսի թեմի կօնսիստորիայի անդամներին և ծառայողներին:

Ուրեմն, ասածներիս յետոյ, ես հրապարակաւ իրաւունք եմ ինձ սեփականացնում առել այստեղ, որ պ. Աբգար Յովհաննիսեանը գրելով թէ ես նպաստեցի հայոց եկեղեցւոյ նիւթական կորստեան, գրեց մի ստութիւն և կրկին ու կրկին անգամ բարձրացուց իմ վերաբերութեամբ «Արձագանքի» իր դրօշակը, և շատ հաւանական է, որ ինքն ևս դարձաւ ուրիշների արձագանք:

Բայց թողնենք այս մանուանութիւնները և էլի դառնանք դէպի գործը: Ցընթացս տասն և հինգ տարուայ իմ ծառայութեանցս համար յօգուտ ազգային եկեղեցւոյ որքան վարձատրութիւն է ինձ յատկացրած: Ես կը պատասխանեմ՝ այնքան, որքան այդ ժամանակամիջոցում կը բաւէր ինձ կառք կամ կոնկա նստելու ազգային եկեղեցական հաստատութիւններ այցելելու համար: Այն ևս ասեմ, որ երբ պատահում էր, որ ինձ հասանելի վարձատրութիւնը արդեօք էր լինում հաշտութեամբ գործը աւարտելու, ես կամաւորապէս նորանից հրաժարվում էի. օրինակ Գօրու քաղաքային վարչութեան հետ ունեցած գործի մէջ և այլն: Այս օր ամենահամեստ հաշվով եկեղեցին մնում է ինձ պարտ մերձաւորապէս երեք հազար ռուբլ.....

Իչխան Արղութեանի կտակի դումարը (քառասուն և հինգ հազար) որ յաջողեց ինձ կորզել նորա օրինաւոր ժառանգների ձեռքից, միջոց տուեց Աղէքսանդրապոլու հարիւրաւոր խղճուկ մանուկներին կրթութիւն տանալու: Եւ այսօր ես հրավիրում եմ այն երեխաներին, ասացուցել պ. Աբգար Յովհաննէսեանին որ նա գրեց մի խոշոր ստութիւն:

Այսօր հայոց եկեղեցին իրաւապէս տէր է ճանաչուած քսան հազար դեսեատին կալուածի իր անտառներով, հանքերով, ջրերով, վարելահողերով, խոտատեղերով և այլն, այսպէս անուանեալ Մարձայ գործոյ պատճառաւ, որ ինձ յաջողեց վաստակել յ՛օգուտ եկեղեցւոյ: Այդ կալուածի ամենահամեստ գնահատութիւնը, ըստ ասելոյն գիտեցողաց, կը լինի մի միլիոն ռուբլ: Միւսների մասին լռում եմ:

Այսպէս, տասն և հինգ տարի աշխատելուց զկնի ես ստիպուած էի հրաժարվել եկեղեցւոյ հաւատարմութիւնից գլխաւորապէս այն պատճառաւ, որ մեծ անդունդ երևաց իմ և թեմական առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսի համոզմանց մէջ: Հրաժարվելովս ես կամաւորապէս հրաժարվեցայ և քանի հազար ռուբլիներից, Մարձայ գործի մասին, ես վերադարձրի կօնսիստորիային նրա պարտաթղթերը: Բնական է, որ այդ իմ վարմունքը պէտք է անսպասելի համարվէր եպիսկոպոսի համար, որ պ. Գէորգ Եւանգուլեանցի (երդուեալ փաստաբանի) իբրև իմ վաղեմի բարեկամի, և պ. Խանազովի ձեռամբ խնդրեց, որ համաձայնեմ պահել ինձ մօտ երկու ծանր գործեր, ինչպէս վերոյիշեալ Մարձայ գործը և «Վանքի» կղզոյ գործը, իշխ. Մուխրանսկու հետ: Զը նայելով իմ բոլոր յարգանաց դէպի պ. Եւանգուլեանցի միջնորդութիւնը, ես բայէ՛ի բաց մերժեցի այն ինքնուրոյն առաջարկութիւնը, յայտնելով, որ եպիսկոպոսի այս տեսակ խնդրանաց ընդունելը վիրաւորիչ կը լինի երդուեալ փաստաբանի կոչման համար: Առ այժմ այնքանս միայն կարող եմ յայտնել հայ հասարակութեանը իբրև ապացոյց պ. Աբգար Յովհաննիսեանի չարախօսութեան և ազատ կը կացուցանեմ ինձ բոլոր այլ տեսակ պատժական միջոցներից նոյն բանը ապացուցելու:

Սենեքերիմ Արծրունի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 2 ապրիլի

«Մշակ» լրագրի 35-որդ համարի ֆելիետօնում տպված էր որ ես լինելով երջանկայիշատակ Ներսէս V-ի անունով հիմնված Թիֆլիսի հայոց հոգևոր դպրանոցի հոգաբարձուներից մին, հոգաբարձութեանս չորս տարվայ ընթացքում ներկայ եմ եղել հոգաբարձական նիստերին ընդամենը ոչ աւելի քան երեք անգամ, ուրեմն ես արժանանում եմ «incognito» հոգաբարձուի անունը կրելու:

Այդ նկատողութեան առթով, հարկաւոր եմ համարում հաղորդել ձեզ, ի տեղեկութիւն ձեր լրագրի ընթերցողների, որ ես ընտրվելով Ներսիսեան դպրոցի հոգաբարձու 1880 թվի նոյեմբեր ամսին, դէպի Ռուսաստան երկար ժամանակով իմ ուղևորվելու պատճառով հրաժարական էի տուել հոգաբարձական պաշտօնից արդէն 1881 թվի հոկտեմբեր ամսին և իմ պաշտօնս ինձանից յետոյ անմիջապէս ընդունեց նոյն դպրոցի հոգաբարձական կանդիդատ, պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեանց: Ընդունեցէք և այլն:

Իչխան Կ. Բէհբութեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Աստրախան, 17 մարտի

Հոգաբարձութիւնս պատիւ ունի խնդրել ձեզանից, որ բարեհաճիք հրատարակել այս գրութիւնը ձեր պատուական լրագրի մօտակայ համարներից մէկում, իբրև հերքումն տեղիս դպրոցների վերաբերութեամբ հաղորդված լուրերի, «Մշակի» № 22-ի մէջ:

Հրապարակաւ յայտնում ենք ընթերցողներին, գլխաւորապէս Աստրախանի հայ հասարակութեանը, որ մեզ յանձնված ուսումնարանները այժմ աւելի բարեկարգ վիճակի մէջ են գտնվում, քան թէ նախընթաց տարիները: Ուսումնարանների աւելի բարւոք դրութիւնը երևի տհաճութիւն է պատճառում ոմանց, որոնք երբ և իցէ նիւթապէս օգտվել են այս հաստատութիւններից, իսկ այժմ զրկված են դրանցից: Նրանք ամեն տեսակ միջոց գործ են դնում պղտորելու միամիտ ժողովրդի սիրտը և կոտրելու ուսումնարանների վարկը: Մի քահանայ անգամ, այն է այժ. հայր Մեղրիսեդեկ Քալանդարեանցը, հակառակ իր հոգևորական կոչմանը, հանդէս դուրս եկաւ տեղս հրատարակվող ռուսաց թերթի մէջ իր անտեղի գրութեամբ ի վնաս ուսումնարաններին: Սա անցեալ աշունքին «աւագ քահանայ» տիտղոսը կը-ռելուն արժանացաւ, և շտապեց ի ցոյց ռուս հասարակութեան հրատարակել «Астраханскій Листокъ» լրագրում որ այդ կոչմանը արժանացել է նոր-սերնդի կրթութեան և լուսաւորութեան գործին նուիրած քրտնաջան աշխատութեան համար, որին ի հարկէ, վկայ են կլասիքական, ռեալական և օրիորդաց գիմնազիաների աշակերտներն ու աշակերտուհիները: Տէր հայրը դասախօսում էր նաև հայոց օրիորդաց դպրոցում, բայց հոգաբարձութիւնս նորա փոխանակ հրաւիրեց Էջմիածնի ճեմարանումն իր ուսումն աւարտած պ. Տէր Պողոսեանցին:

Ուսումնարանների առաջադիմութիւնը մեր սըրտի ամենամօտիկ առարկան համարելով, աշխատել ենք, որքան հնար է, հասնել մեր նպատակին՝ ուշադրութիւն չը դարձնելով ոմանց լարած որոգայթներին:

Գերապատիւ Սուքիաս սրբազանի առաջնորդութեամբ ու աջակցութեամբ, նրա եկած օրից սկսած՝ զգալի փոփոխութիւն կարողացանք մտցնել մեզ յանձնված ուսումնարաններում: Անցեալ 1884/85 ուսումնական տարին հրաւիրվեցան Պ. Տէր Պողոսեանց և Ա. Վարդանեանց, որոնք իրանց ուսման ընթացքը աւարտել են Գէորգեան ճեմարանում: Սրանք իրանց բարեխիղճ աշխատութեամբ դրաւել են թէ սրբազանի, թէ մեր և թէ հասկացող դասակարգի համակրութիւնը: Հոգաբարձութիւնս զգալով, որ օրիորդաց ուսումնարանի համար անհրաժեշտ է ունենալ մի օրինակելի վերակացու—վարժուհի, հայ հոգւով կրթված, հրաւիրեց Կովկասից օր. Գ. Տէր-Խաչատրեանցին, որի եռանդուն աշխատութիւնը և ցոյց տուած արդիւնքը միայն նրանք կարող են չը տեսնել և չը գնահատել, որոց մէջ չէ հնչում խղճի ձայնը, որոնք կուրացած են անձնական շահով և որոնք այդպիսիների ձեռքին գործիք և խաղալիք են դարձել: Ուսումնարանի թշնամիները ամեն միջոց գործ են դնում վերոյիշեալ ուսուցիչներին և վարժուհուն զզուեցնել, որ նրանք թողնեն, հեռանան և ասպարէզը դարձեալ իրանց մնայ:

Հոգաբարձութիւնս դեկտեմբերի վերջին արձակեց հին խմբից մնացած ուսուցիչ Սարգիս Սարգսեանցին և նրա փոխանակ հրաւիրեց պ. Ց. Դաւթեանցին, որը անցեալ տարի հիւանդութեան պատճառաւ վկայականով դուրս էր եկել Ներսիսեան դպրոցի վերջին դասարանից:

Հոգաբարձութիւնս կուսակցութեան բաժանված չէ. միայն ցաւելով յայտնում ենք, որ չորս հոգաբարձուներից մէկը, այն է պ. Սիմէոն Պոպովեանցը, բաժանվելով մեզանից՝ սկսեց ընդդէմ մեզ գործել:

Հոգաբարձութիւնս խնդրում է նաև միւս յարգելի խմբագիրներից, որ նրանք էլ բարեհաճեն արտատպել այս գրութիւնը իրանց լրագիրներում:

Հոգաբարձուներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք լսում ենք, որ Թիֆլիսի փոստային վարչութեան կառավարիչ, Ս. Դ. Բէզիրգանով հրաժարական է տուել իր պաշտօնից ապրիլի 1-ին: Պ. Բէզիրգանով 10 տարի շարունակ մեր փոստային վարչութեան կառավարիչ լինելով, մեծ համակրութիւն և սէր էր վայելում թէ փոստի մէջ ծառայողների և թէ քաղաքիս հասարակութեան կողմից: Նա վերին աստիճանի աղնիւ, հասկացող, բարի, արդար, եռանդուն ու գործ կատարող պաշտօնեայի հռչակ էր վայելում: Ով որ գործ է ունեցել նրա հետ, միշտ գոհ էր մնում նրանից: Նրա տասը տարվայ կառավարութեան ժամանակ Թիֆլիսի փոստային վարչութեան մէջ եղած կարգ ու կանոնը, կարգապահութիւնը, դեռ շատ երկար ժամանակ կը յիշեն նրանք, որոնք ստիպված էին փոստի հետ ամեն օր գործ ունենալ:

—

Լրագիրները լսում են, որ մշակվում է մի նախագիծ, որով մի քանի փոփոխութիւններ պիտի մտցնվեն հեռագիրների գների մէջ:

—

Մայրաքաղաքների լրագիրները հաղորդում են, որ ֆինանսների մինիստրութեան՝ գործարանատէրերի դէպի ճնասված բանւորները ունեցած պատասխանատուութեան վերաբերութեամբ մշակած օրինագիծը պարունակում է հետևեալ կէտերը. գործարանատէրերը պատասխանատու են, երբ դժբաղդութիւնը բանւորների հետ առաջ է գալիս մեքենաների վատութիւնից, և բանւորներին այնպիսի հրամաններ տալուց, որոնք դժբաղդութիւնների պատճառ են դառնում: Վարձատրութեան չափը որոշում է դատարանը: Բանւորի մեռած ժամանակը, գործարանատէրը պարտաւոր է հոգալ թաղման ծախսը, որոշեալ վարձատրութիւն տալով մեռածի այրիին, երեխաներին կամ ծնողներին: Բանւորի տկարութեան ժամանակ գործարանի տիրոջ կողմից տրվում է նրան որոշեալ թոշակ:

—

Արդարադատութեան մինիստրութիւնը վերջնականապէս վճռել է դատաստանական պրիստավների պաշտօնների վրա նշանակել միայն իրաւաբանական ուսումը ստացած անձանց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Անգլիայից եկած լուրերը միանգամայն հաստատում են, որ Գլադստոնը իրլանդական բարենորոգումների նախագծով, պատրաստվում է մի նշանաւոր քայլ անելու: Նոյն իսկ անգլիական մամուլի աղատամիտ մասը, որը միշտ համակրութեամբ է վերաբերվել դէպի Գլադստոնի անցեալ/փառաւոր գործունէութիւնը, այժմ մի տեսակ կասկածանքով է վերաբերվում դէպի Գլադստոնի դրութիւնը, որի մէջ նա կարող է ընկնել իրլանդական բարենորոգումների նախագծի առաջարկութեամբ: Նախագիծը շատ արմատական բնաւորութիւն ունի. անգլիական այժմեան առաջին մինիստրը միայն այդպիսով հնարաւոր է համարում վերջ դնել իրլանդական չարժումներին, և միայն այդպիսով կարելի է համարում տալ երկրին արժանաւոր կացութեան միջոցներ:

Այդ նախագծի մանրամասնութիւնները դեռ չեն դուրս եկել Գլադստոնի դրասենեակից. սակայն այսքանը յայտնի է, որ այդ նախագծի հիման վրա պիտի առնվեն իրլանդական կալուածատէրերից հողերը, որի համար հարկաւոր է 150 միլիոն ֆունտ ստերլինգ: Իրլանդիան կունենայ իր պարլամենտը: Այդ պարլամենտը կը քննի այն ձևերը և եղանակները, որոնցով կարելի կը լինի բաժանել հողերը Իրլանդիայի գիւղացիների մէջ: Իրլանդական պարլամենտը կունենայ օրէնսդրական ժողովի մի քանի իրաւունքներ: Իր յարաբերութիւնների մէջ դէպի Անգլիան, Իրլանդիան նոյն յարաբերութեան մէջ կը լինի, ինչ յարաբերութեան մէջ գտնվում են Գերմանական դաշնակցութեան պետութիւնները դէպի դաշնակցական կառավարութիւնը: Անգլիային և Իրլանդիային վերաբերեալ ընդհանուր հարցերի քննութեան համար պետական պարլամենտի մէջ Իրլանդիան կունենայ իր ներկայացուցիչները: Շուտով այդ նախագիծը կը ներկայացնվի համայնքների ժողովի քննութեան: Գլադստոն վճռել է պաշտպանել մինչև վերջին կէտը իրլանդական շահերը, և Չեմբերլենի, Տրիվելյանի և մի քանի ուրիշների

հրաժարականը բոլորովին յուսահատութիւն չը պատճառեց իրլանդական հարցի այդ պաշտպանին:

Անգլիական հասարակաց կարծիքը ուշադրութեամբ սպասում է խնդրի վճռվելուն: Գլադստոնի դէմ օրից օր շատանում են թշնամութիւնները, և հակառակ կուսակցութիւնները ամենայն օր սաստկանում են: Իր հաստատակամութեամբ Գլադստոնը կարծես թէ ուզում է ասել ամենքին, որ ինքը լաւ է ըմբռնել հարցի էութիւնը, որի համար մի քանի ժամանակ առաջ ինքն դիմեց երկրի բոլոր դասակարգերի խորհրդներին և իրենց բոլորի կարծիքը: Իրլանդական նախագծի քննութիւնը այժմ հետաքրքրում է Անգլիայում բոլորին, առանց զանազանութեան դասակարգի, հասակի, սեռի, կոչման և պարապմունքի: Առայժմ Իրլանդիան սպասում է: Պարնէլը և իր կուսակցութիւնը խոհեմութեան քաղի տակ ծածկված, ոչինչ ցոյց և ոչինչ ազդակի միջամտութիւն չեն անում: Բայց Պարնէլը մի քանի անգամ հասկացրեց արդէն, որ ինքն միշտ Գլադստոնի հետ կը լինի, և հարկաւոր ժամանակ չի զլանայ օգուտ քաղելու Իրլանդիայում ունեցած իր ժողովրդականութիւնից և անունից:

ՑՈՒՆԱՍՏԱՆ

Ցունաստանը աւելի և աւելի որոշ և վճռագաւոր դիրք է ընդունում կարծես: Այժմ այլ ևս Դելեանիսի մինիստրութեան հրաժարականի խնդիրը չէ զբաղեցնում յոյներին: Ազգը հաշտութեան մէջ է մտել կառավարութեան հետ, որը այժմ վճռական կերպով շարունակում է պատերազմական պատրաստութիւններ տեսնել: Ցոյն կառավարութեան այդ որոշ դիրքը մեծ ազդեցութիւն կունենայ Բալկանի ընդհանուր գործերի վրա, որոնք իրանց կողմից մեծ ազդեցութիւն գործեցին Ցունաստանի վրա: Այդ փոխադարձ յարաբերութիւնը ամենապարզ ապացոյց է, թէ որքան մեծ կապ ունեն Ցունաստանի շահերը ընդհանուր Բալկանեան շահերի հետ: Մակեդոնիան յուզված դրութեան մէջ է. Ալբանիան ապստամբութեան ցոյցեր է անում: Ցունաստանը յարաբերութիւնների մէջ է մտնում Ալբանիայի հետ և Բ. Դուռը ստիպված է լուրջ պատրաստութիւններ տեսնել ծանր ապագայի համար: Սակայն հէնց այդ ապագայի որպիսութեան վրա աւելի որոշ գաղափար կազմելու համար, աւելորդ չէ ծանօթանալ առաջին մինիստր Դելեանիսի կարծիքների և մտքերի հետ, որ նա արտայայտեց «Temps» լրագրի Աթէնքի թղթակցի հետ ունեցած խօսակցութեան մէջ:

Այդ խօսակցութեան սկզբում թղթակիցը ցանկութիւն յայտնեց իմանալու թէ, որքան ճիշդ են Դելեանիսի հրաժարականի մասին տարածված լուրերը. «Իմ արտասահմանեան բարեկամները, ասաց Դելեանիսը, խորհուրդ էին տալիս ինձ հրաժարական տալ, բայց ես այդ խորհուրդները խորին ուշադրութեամբ քննելով, ոչինչ հիմքեր չէի գտնում, որոնք կարող լինէին արդարացնել իմ հրաժարականը: Ժողովը հաստատեց այն բոլորը, ինչ որ մենք պահանջում ենք սպառավնութեան համար: Այն ժամանակից մինչև այժմ գործերի ընթացքը չէ փոխվել, և մենք գործում ենք համերաշխ երկրի և պարլամենտի մեծամասնութեան հետ: Թագաւորը պատրաստ է համաձայնելու մեր առաջարկելի բոլոր միջոցների հետ: Ես տեսնում եմ, որ մենք գործել ենք յօգուտ երկրի շահերի, և այդ պատճառով հրաժարական տալու ոչինչ պատճառ չը կայ»:

—Ուրեմն դուք զինաթափ լինել անհնարին ք հարմարում, հարցրեց թղթակիցը:

—«Ոչ, պատասխանեց մինիստրը և եթէ որ և իցէ անսպասելի պատճառով պէտք լինի անպատճառ զինաթափ լինել, ես չեմ կարող այդ բանը յանձն առնել ինքս: Ցունաստանը չէ կարող համաձայնել Բոլգարիայի և Արևելեան—Ռումելիայի միութեան խնդրի հետ, առանց վարձատրութիւն ստանալու. Բերլինի կոնգրէսը Բալկանեան պետութիւնների սահմաններին վերաբերեալ խնդրի մէջ, աշխատեց հաւասարակշռութիւն պահպանել այդ երկրի ազգաբնակութիւնների մէջ: Առաջին հարուածը այդ հաւասարակշռութեան տուեց Ցաճկաստանը, հրաժարվելով տալու մեզ այն բոլորը, ինչ որ վճռած էր Բերլինի կոնգրէսի ձեռքով: Բոլգարիան միացնելով իր հետ Ռումելիան, տուեց այդ հաւասարակշռութեանը երկրորդ, աւելի սաստիկ հարուած. մենք այդ չենք կարող տանել: Խնդիրը ազգային ինքնասիրութեան, կամ մինիստրական շահերի խնդիր չէ, այլ Ցունաստանի համար կեանքի և մահվան խնդիր է: Բոլգարիայի և Ռումելիայի միութեան պատճառով, մենք բաժանվում ենք այդ երկրի մէջ ապրող յոյներից և կորցնում ենք Հելլեն ժողովրդի մի մեծ մասի վրա ունեցած մեր ազդեցութիւնը»:

Դրանից յետոյ թղթակիցը նկատեց, որ ամենքը շատ զարմացած են այն ընդդիմութեան պատճառով, որ Ցունաստանը ցոյց է տալիս Եւրոպային: «Եւրոպայի վարմունքը, պատասխանեց մինիստրը, շատ անհետևողական է. մենք զգում ենք մեր իրաւունքների հիմնաւոր լինելը և այդ տալիս է մեզ մեծ ոյժ: Բոլգարիան խախտում է վեց պետութիւններից հաստատված Բերլինի կոնգրէսի վճիռը: Իսկ մենք պահանջում ենք միայն այդ վճռի ճիշդ կատարումը, մենք պահանջում ենք այն, ինչ որ մեզ խոստացել են:

Ապա պատասխանելով յունական նաւատորմին եւրոպական նաւատորմի կողմից սպառնող վտանգի վերաբերեալ կարծիքներին, Դելեանիս ասեց. —«Մեր նաւատորմը—մեր աջ ձեռքն է: Մեր աջ ձեռքը կտրելուց յետոյ մենք դեռ կունենանք ձախ ձեռք: Մենք կը շարունակենք մեր պատրաստութիւնները և կը սպասենք յարմար րոպէի: Ճշմարիտ է, մենք միշտ կը լինենք վտանգի պատճառ եւրոպական խաղաղութեան համար, բայց եթէ Եւրոպային թանգ է խաղաղութիւնը, թող օգնէ մեզ դուրս գալու այս դրութիւնից, որը միանգամայն մեր ստեղծածը չէ»:

Այդ խօսքերից յետոյ մինիստրը պատասխանելով թղթակցի այն խօսքերին, որով նա նկատում էր, թէ չէր կարելի արդեօք մի նոր ձևակերպութիւն անել, որը համ Ցունաստանին բաւականութիւն տար, համ էլ ընդունվէր Բ. Դռան կողմից, ասեց, որ Ցունաստանը Բերլինի կոնդրէսի վճիռների հիշդ իրագործումն է պահանջում, և Ցունաստանի ցաւը Բոլգարական միութեան իրագործումն է:

Այդպիսով Ցունաստանի առաջին մինիստրի բացատրութիւններից իսկ երևում է, որ Ցունաստանը երբէք չէ կարող հաշտվել Բալկանեան թերակղզու երկրի ներկայ վիճակի հետ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նորերումս Վիէննայում կայացաւ գերմանական ազգութեանը պատկանող գիւղացիների մի ժողով. ներկայ էին մինչև 2000 երկրագործներ: Ժողովը կայացրեց գիւղական ժողովրդի իրաւունքները ընդարձակող մի քանի վճիռներ, ինչպէս անկախ զիւղական համայնքների հաստատելը, ընտրողական իրաւունքի ընդարձակումը և այլն:

—Բէլգիայի բանւորների դրութեան խնդիրը ընդհանրապէս եւրոպական մամուլի առանձին ուշադրութեան նիւթ է դարձել այս րոպէիս: Հրատարակվում են բրոշիւրներ, գրքեր և լրագրական յօդուածներ այդ հարցի առիթով, ոմանք կուսակից, ոմանք հակառակորդ հանդիսանալով բանւորների դասակարգին: Այդ հարցի առիթով իր վրա մեծ ուշադրութիւն դարձրեց մի բրոշիւր ևս, որ այս օրերս Փարիզում հրատարակվեցաւ, մանաւանդ որ նրա հեղինակը մի հոգևորական անձն է, արքեպիսկոպոս Հիլբերտ: Բրոշիւրը կրում է «Ռամկապետութիւնը և նրա սոցիալական և կրոնական անցեալը» վերնագիրը: Արքեպիսկոպոս-հեղինակը, թէև ցոյց է տալիս ռամկապետական ուղղութեան մէջ խոշոր սխալութիւններ, բայց իրան կուսակից է ցոյց տալիս ազատութեան և դէմոկրատիայի լաւ ապագային հաւատում է: Կաթոլիկ կղերը վրդովված է այդ գրուածքի դէմ և կղերական բանակից մեծ յարձակմունքներ են լինում արքեպիսկոպոս-հեղինակի դէմ:

—Վիէննայից հաղորդում են լրագիրներին, որ այնտեղ լաւ տպաւորութիւն չեն գործել Սերբիայի մինիստրական փոփոխութիւնները: Աստրիայում Ռիստիչին չեն սիրում, քանի որ նա ռուսաց կուսակցութեանն է պատկանում:

—Ռիստիչ սերբական մինիստր-նախագահ դառնալով, իր ճառի մէջ բացատրեց իր ծրագիրը և խաղաղասիրական ուղղութիւն ցոյց տալով յայտնեց որ մի կողմից Սերբիան բոլոր պետութիւնների հետ պէտք է բարեկամական յարաբերութիւններ պահպանի, իսկ միւս կողմից իր ներքին քաղաքականութեան մէջ պէտք է առանձին ուշադրութիւն դարձնի խախտված ֆինանսական դրութեան կարգի բերելու վրա:

—Բէլգիայում անգործ մնացած բանւորների թիւը, ինչպէս հաղորդում են լրագիրները, անցնում է 50,000-ից:

—Գերմանական բայխստագը իր մարտի 31-ի նիստի մէջ սկսեց քննել կառավարութիւնից առաջարկած սոցիալիստներին վերաբերեալ օրէնքի հինգ տարով երկարացնելու նախագիծը: Ժողովները ազմկալի էին: Երկար խօսեց Ներքին գործերի մինիստր Պուտկամէր, պաշտպանելով նախագիծը: Նրա կարծիքով պէտք է երկարացնել օրէնքի ժամանակը քանի մի տարով, որովհետև միայն դրանով կարելի է առաջն առնել Բէլգիայում տեղի ունեցող բանւորների այժմեան անկարգութիւնների հարևան երկիրների մէջ անցնելուն: Մինիստրին պատասխանեց կղերական կուսակցութեան պարագլուխ Վինդհորստ, մի քանի կէտերում հակառակելով Պուտկամէրին: Ապա խօսեց լեհական պատգամաւոր Սեգիլսկի, որ յայտնեց թէ ինքն հակառակ է օրէնքի ժամանակի երկարացնելուն, քանի որ առհասարակ հակառակ է բացառական օրէնքներին: Այնուհետև, երբ սկսեց խօսել սոցիալիստ Բեբէլ, նրա ճառը մեծ յուզմունք առաջ բերեց ժողովում: Երկրորդ օրվայ նիստին մասնակցեց վիճաբանութիւններին և ինքն իշխան Բիսմարկ, պաշտպանելով կառավարչական նախագիծը: Բիսմարկի և Բեբէլի մէջ ծագեցան նիստի ժամանակ սաստիկ վիճաբանութիւններ: Բայխստագը ընդունեց նախագիծը, սոցիալիստների դէմ եղած օրէնքը երկարացնելով երկու տարով, բայց ոչ թէ հինգ տարով, ինչպէս այդ պահանջում էր կառավարութիւնը:

—Մայրաքաղաքների լրագիրներում և մասնաւորապէս «Новое Время» լրագրում կարդում ենք հետևեալը: «Բոլգարիայից հաղորդում են Վիէննայի լրագիրներին, որ Արևելեան-Ռումելիայում, կամ ինչպէս այժմ անուանում են Հարաւային-Բոլգարիայում, դժգոհութիւնները աւելանում են: Բոլգարիայում արդէն կազմակերպվեցաւ ռամկավարական մի կուսակցութիւն, որն ունի իր հրամանն օրգան: Այդ լրագրի պրոգրամը հետևեալն է. ա) քաղաքական կատարեալ ազատութիւն, բ) վարչութեան ապակենտրոնացումն և համայնքների ինքնավարութիւնը, գ) սահմանադրութեան համապատասխան վերաքննութիւնը, դ) դատաստանական բարենորոգումներ հաստատված ռամկապետական հիմունքների վրա, երդուեալների դատարանի հետ միասին, ե) եկեղեցի կանոնաւորելը, նշանակելով աւելի մեծ գումար ժողովրդական կրթութեան գործի վրա և հիմնելով ազգային համալսարան, զ) պետական կրեդիտի կազմակերպութիւնը, է) հարկերի կանոնների փոփոխումն և ը) բոլոր բոլգարների միութիւնը:»

—Փարիզի լրագիրները հաղորդում են, որ իբր թէ իշխան Բիսմարկ առաջարկում է Բէլգիայի կառավարութեանը Գերմանիայի օգնութիւնը բանւորների շարժման առաջն առնելու համար: Ֆրանսիայում այդ առաջարկութեանը մեծ նշանակութիւն են տալիս քանի որ բանւորների խնդրի գլխաւոր կենտրոնը, իսկապէս Բէլգիան չէ, այլ Ֆրանսիան է:

—Բրիւսէլից հաղորդում են լրագիրներին, որ մարտի 15-ին սկսեցին տեղի ունենալ Բէլգիայի մի քանի տեղերում բանւորների և նրանց վարձողների ներկայացուցիչների մէջ խորհուրդներ, երկու կողմերի մէջ որ և է պայմանաւորութիւն հաստատելու նպատակով: Բանւորների ներկայացուցիչները այդպէս են ձևակերպում մօտաւորապէս իրանց պահանջները. ա) գործարաններից ստացվող տարեկան զուտ արդիւնքի մի որոշ մասը (plus value) բանւորներն էլ պէտք է ստանան, այդպիսով գործարանի բանւորների ամբողջութիւնը ընկեր դառնալով գործարանը կառավարող տիրոջ կամ ակցիոնէրական ընկերութեան, բ) հաստատել միջնորդ դատարան բանւորների և նրանց վարձողների մէջ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Իշխան, կը բարեհաճէք մի տոմսակ վերցնել բարեգործական նպատակով տրվող կոնցէրտին, դիմում է իր ծանօթ իշխանին կոնցէրտի կարգադրիչներից մինը:

—Ոչ, շնորհակալ եմ, չեմ կամենում:

—Բայց կը համարձակվեմ ձեզ յայտնել, իշխան, որ ձեր եղբայրը ուրախութեամբ վերցրեց ինձանից նոյն կոնցէրտի համար մի տոմսակ:

—Եթէ ես իմ եղբօրս չափ խուլ լինէի, ես էլ մեծ ուրախութեամբ կը վերցնէի մի տոմսակ ձեր կարդադրութեան տակ տրվող կոնցէրտի համար, եղաւ պատասխանը:

* *
*

Ռուսաստանի մայրաքաղաքի, Պետերբուրգի մասին կազմած վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ քաղաքում 1869 թվին դիտութիւններով, գրագնութիւնով և գեղարուեստով պարապողների թիւը հասնում էր 5,120-ի, իսկ 1881 թվին նոցա թիւը հասնում էր 3,133-ի միայն: Պետերբուրգի հետևեալ պարապմունքների մասին հաւաքած վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ.

2,121	մարդու	վրա գալիս է	1	գրականագէտ.
657	»	»	1	բժիշկ
462	»	»	1	հասար. էին
308	»	»	1	բանտարկեալ
107	»	»	1	հիւանդ

Համեմատութիւնից դուրս բերած եզրակացութիւնը հետաքրքիր է:

* *
*

Փարիզում բացուած է հանդանակութիւն, կազմելու մի դրամապլուխ, 'ի նպաստ այն հետազօտութիւնների, որոնց նպատակը կը լինի թոքախտից բժշկելու միջոցները գտնել: Այդ միտքը պատկանում է Պաստէորին: Հանդանակութիւնը յաջող է գնում:

* *
*

Ռուսաց ֆինանսական մինիստրութեան 1884 թվին վերաբերեալ ստատիստիկայից քաղում ենք հետևեալ թուանշանները չաքարի գործածութեան մասին: Մեծ Բրիտանիան գործ է ածում տարեկան . . . . . 67,100,000 պ. չաքար:

Ֆրանսիա	27,023,000	»	»
Գերմանիա	21,350,000	»	»
Ռուսաստան.	18,300,000	»	»
Աւստրիա	14,030,000	»	»
Իտալիա	5,368,000	»	»
Իսպանիա	3,050,000	»	»
Շվեդիա-Նորվեգիա . . .	2,867,000	»	»
Բելգիա	2,623,000	»	»
Հոլլանդիա	2,169,000	»	»
Շվեյցարիա	1,769,000	»	»
Դանիա.	1,708,000	»	»
Եւրոպական Տաճկաստան և Բոլգարիա.	1,047,000	»	»
Պորտուգալիա.	976,000	»	»
Ռումինիա.	427,000	»	»
Սերբիա.	213,000	»	»

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՆԻԺՆԻՑ-ՆՈՎԳՈՐՈԴ, 2 ապրիլի: Այսօր վաղ առաւօտեան, երկու բուքսիրի շոգենաւեր դուրս գնացին ազատելու այն բարժերը, որոնք անշնաս են մնացել խորասուզվելուց, և որոնցից մօտ ութը բարժեր ազատեցին: Անկարելի է ճշդութեամբ իմանալ խորտակված բարժերի թիւը, միայն յայտնի է, որ 62 բարժերից, որոնք ձմեռում էին Սորմովսկու ծոցումը, ազատված են ընդամենը մօտ 25: Բացի բարժերից մնացած են և ծոցում ձմեռող երկու փոքր շոգենաւեր, որոնցից մէկը թեթև կերպով է մնացած, բայց երկուսն էլ քերված են սառուցից: Վոլգայի վրա սառուցի հոսանքը խիստ մեծ է, Օկայի վրա սառուցը ցրված է: Վոլգայի ջուրը վեց արշինաչափ աւելացել է:

ԼՈՆԴՈՆ, 2 ապրիլի: Համայնքների ժողովը Իրլանդիայի ինքնավարութեան մասին կազմված բիլլի երկրորդ ընթերցումը յետաձգեց մինչև ապրիլի 28:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 ապրիլի: Լուրերին նայելով մինիստրների մասնաժողովը միաձայն վճռեց շարունակել Անդրկասպեան երկաթուղու դիծը մինչև Սամարկանդ: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ հիմք կայ ենթադրելու թէ ամառվայ սկզբում անդրծովեան ուղղակի հաղորդակցութիւնների տարիֆները դործադրութիւն կը ստանան: Նոյն լրագիրը հաղորդում է որ պատերազմական մինիստրութիւնը առաջադրեց պետական խորհրդին այն արտօնութիւնների վերաբերեալ օրինագիծը, որ վայելելու են սահմանագլուխ երկիրներում ապրող զինուորական կոչմանը պատկանող անձինք:

ԱԹԷՆՔ, 3 ապրիլի: Պետութիւնների ներկայացուցիչների հաւաքական յայտագիրը, որ տեղեկացնում է յունաց կառավարութեանը Կ. Պոլսի դեսպանաժողովի վճիռների մասին, սահմանափակվում է Ցունաստանին տրած առաջարկութեամբ բաւականութիւն տալ Եւրոպայի ցանկութեանը յօգուտ խաղաղութեան: Ենթադրում են որ Դելեանիս կը պատասխանի, թէ միակ միջոցը խաղաղութիւն ապահովելու, Ցունաստանի պա-

հանջների գոհացման մէջն է կայանում, համեմատ Բէրլինեան դաշնագրի։ Ազգային ժողովում ընդդիմադրութեան պարագլուխը կրկին սկսեց դիմադրութիւն անել պատերազմի մասին. նոյն իսկ ազգային ժողովի նախագահը յայտնեց թէ Ցունաստանը կարող է պատերազմ վարել միմիայն այն դէպքում, եթէ իրան կաջողվի ապստամբեցնել Թիւրքիային հպատակ յոյն ազգաբնակութիւնը։ Դելիանիս պաշտպանելով իր քաղաքականութիւնը, մատնացոյց արաւ այն հանգամանքի վրա, որ արդէն ժողովված է 77,000 զօրք և շուտով յունաց զօրքը հասնելու է 110,000 հոգու։ Ազգային ժողովը 124 ձայների առաւելութեամբ 77 ձայնի դէմ ընդունեց նոր փոխառութեան պրոէկտը։

Կ. ՊՕԼԻՍ, 3 ապրիլի։ Պետութիւններին ուղարկած շրջաբերականում Բ. Դուռը յայտնում է թէ ցանկալի կը լինէր, եթէ միջազգային նաւատորմը ստիպէր Ցունաստանին զինաթափ լինել։

ԲԵԼԳՐԱԴ, 3 ապրիլի։ «Կարմիր խաչի» ընկերութեան ռուսաց բաժինը թողնելով երկիրը, ուղևորվեց ապրիլի 1-ին դէպի Ռուսաստան։ Քաղաքացիները նորից համակրական ցոյցեր արեցին ճանապարհ ընկնողներին։

ՎԻԵՆՆԱ, 3 ապրիլի։ Պատգամաւորների ժողովը ձեռնամուխ եղաւ զինուորագրութեան մասին օրինագծին։ Գալիցիայի պատգամաւոր Գոմպէչ յայտնեց լեհացիների կողմից, որ նրանք որպէս Աւստրիայի հաւատարիմ հպատակներ, ձայն կը տան յօդուտ օրինագծի։

ԲՐԻՆԴԻԶԻ, 3 ապրիլի։ Այստեղ եղան խոլերայի երկու պատահական դէպքեր։

ԼՕՆԴՕՆ, 3 ապրիլի։ Երէկվայ կայացած միտինգի միջոցին, որ գումարվել էր իրլանդական նախագծի դէմ բողոքելու համար, Չարտինգտոնն և Սալսբերին խիստ կերպով բողոքեցին նախագծի դէմ և հաստատում էին, որ այդ նախագծի ընդունելը կարատաւորի և կը թուլացնի Անգլիային։ Նրանք օրինակ էին բերում Թիւրքիային, որի ինքնավար երկիրները փոքր առ փոքր անկախութիւն ստացան։ Երկու հռետորների ճառերը ընդունվեցին ոգևորված ծափահարութիւններով։ Միտինգին ներկայ էին երկու պալատների բազմաթիւ անդամներ։

ՎԻԵՆՆԱ, 3 ապրիլի։ Պատերազմական մինիստրը պաշտպանելով պատգամաւորների ժողովում զինուորագրութեան նախագիծը, յայտնեց որ այդ նախագծի նպատակն է ոչ թէ զօրքի թիւը աւելացնելու, այլ միայն ներգործական զօրքի մէջ եղած պակասը լրացնելու և այդ լրացուցիչ զօրքը միայն պատերազմի ժամանակ գործ դնելու։ Մինիստրը աւելացրեց որ իրքը չէ կասկածում հարևանների բարեկամութեան մասին, բայց որ նոր զինուորագրութիւնը նշանակված է դէպի կայսրութիւնը աւելի մեծ յարգանք ներշնչելու համար։

Կ. ՊՕԼԻՍ, 3 ապրիլի։ Ռուսաստանը, Գերմանիան և Աւստրիան հաւանութիւն տուին Ցունաստանի վերաբերմամբ Բ. Դրան վերջին շրջաբերականին և յայտնեցին, որ չարունակելու են ամեն միջոցներ գործ դնելու Ցունաստանին զինաթափ անելու համար։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿՕՓԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ ԵՎ ԸՆԿ.

(Ц. 4907) 6—50 (2)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ցանձն է առնում թարգմանել ֆրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից մաուչելի գներով։ Հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը։

13—100

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Չորեքշաբթի, ապրիլի 16-ին, „ԱՆԱՏՕԼԻԱ“ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ Է ԲՕՇԵԼ (BOCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս, Զմիւռնիա և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Դարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունու դպրեվանքում, № 103.

2—4

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԻԳԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՈՒՄ,

Զավչավաձէվսկայա փողոցի վրա, Ֆէդորէնկոյի տանը, ապրիլի 6-ից սկսած մինչև ամսիս 10-ը, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, տեղի կունենայ ԵՐԵԽԱՆԵՐԻ ու ԿԱՆԱՆՑ ձերմակեղէնի և գարնան եղանակի զգեստների վաճառումն։

2—2

ԹՈՇԼՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. դավնեա և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի ապիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կօսմէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։

Բերթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ։ Ցաւիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բալզամից, մազերը պնդացնելու, խատացնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ., առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիսգուտմանի» գործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լոնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։

24—100

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՅԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնները առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վաճառվում է կենտ. գրավաճառանոցում, եղբարց Ծովիանովների բանկային գրասենեակում և Հեղինակի մօտ. Тифлисъ, Лабораторная, № 11: Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է ամեն տեղ 2 բուբլի։

13—30

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՄՕԼԻԷՐԻ

ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ ՀԻՒԱՆԴ

Կատակերգութիւն երեք արարուածով

Թարգմանութիւն ֆրանսերէնից

Ե. ԼԱԼԱՑԵԱՆՑԻ

Գինն է 40 կոպէկ

Ստացվում է կենտրօնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

3—3

ԱՊՐԻԼ **ՏԵՂԵԿԱՑՈՅՑ** 1886 թ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻՑ Բաթում փոստային գնացքը գնում է առաւօտ. . . . 8 ժ. 35 ր.
ԲԱԹՈՒՄԻՑ Թիֆլիս գալիս է երեկ. 10 » 25 »

—

ԹԻՖԼԻՍԻՑ Բագու գնում է երեկոյ. 10 » 55 »
ԲԱԳՈՒԻՑ Թիֆլիս գալիս է առ. 8 » — »

—

ԹԻՖԼԻՍԻՑ Սուրամ ապր. պատ. գնացքը գնում է կէսօրից յետոյ . . 3 » 15 »
ՍՈՒՐԱՄԻՑ Թիֆլիս գալիս է առ. 8 » 24 »

—

ՇՈԳԵՆԱՒԻՐ «Ռուսաց ընկ. նաւադնացութեան և առևտրի»

ՀԻՆԳՇԱԲԹԻ 4 ժամին կէս օրից յետոյ շոգենաւը գնում է ուղղակի ընթացքով ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ՕԴԷՍՍԱ։

ՇԱԲԱԹ 8 ժամ. երեկոյ. շրջական ընթացքով ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ՕԴԷՍՍԱ։

ԿԻՐԱԿԻ երեկոյեան արտատամանեան ընթացքով ԲԱԹՈՒՄԻՑ դէպի Կ. ՊՕԼԻՍ։

—

Շոգենաւերը գալիս են ԲԱԹՈՒՄ. երեքշաբթի երեկոյեան Օդէսայից, ուրբաթ առաւ. Օդէսայից (ուղղակի ընթացք) և շաբաթ առաւ. Կ. Պոլսից։

—

ՓՕՍՏԱՅԻՆ ԿԱՐՔԵՐ

ԹԻՖԼԻՍԻՑ Վլադիկավկաս փոստ. կառքը գնում է. առաւօտեան 8 ժամին և հասնում է Վլադիկավկաս 6-ին կամ 7 ժամին։

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ դուրս է գնում առաւօտեան 9 ժամին և հասնում է Թիֆլիս 5 կամ $5^1/_2$ ժամին։

Կառքերը, որոնք ճանապարհին չեն դիշերում, ԹԻՖԼԻՍԻՑ դէպի Վլադիկավկաս գնում են 4 ժամին կէսօրից յետոյ, նոյնպէս և Վլադիկավկասից դէպի Թիֆլիս։

—

ԹԻՖԼԻՍԻ ՊԻՏՈՅՔՆԵՐԻ ՏԱԿՍԱ

Թխած հաց կրուպչատկա ալիւրից ֆունտ.			5 կոպ.
Ցորենի ալիւրից	1	տեսակի	$2^1/_2$ »
	2	—	2 »
Թօնրի մէջ թխած հացի ֆունտ.	1	տեսակ	$4^1/_2$ »
	2	—	3 »
	3	—	$2^1/_2$ »
Կրուպչ. և ցորենից լավաշներ	1	տեսակի	$4^1/_2$ »
	2	—	$3^1/_2$ »
	3	—	3 »
Տաւարի մսի ֆունտը	1	տեսակի	8 »
	2	—	7 »
	Սուկի	—	14 »
Ոչխարի մսի ֆունտը.			9 »
Խոզի մսի ֆունտը			— —

—

Дозволено цензурою, Тифлисъ Апрѣля 4 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. кая.